

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարչության ֆինանսատնտեսագիտական բաժինը տարվա ընթացքում ժամանակին կատարել է ՏԱՊ-ով և այլ հանձնարարականներով իր առջև դրված բոլոր խնդիրները:

Ընդունվել և ամփոփվել են մարզի համայնքների բյուջեները և դրանց կատարման վերաբերյալ ամսական և եռամսյակային հաղորդումները, տարեկան հաշվետվությունները, դրանք մարզպետին ու պետական այլ համապատասխան մարմիններին ներկայացնելու համար կազմվել են անհրաժեշտ տեղեկանքներ, հաշվետվություններ, հաղորդումներ և այլ փաստաթղթեր:

Կազմվել են մարզի, համապատասխան տարածաշրջանների համայնքների բյուջեների կատարման , ՏԻՄ-երի և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողներին վճարված աշխատավարձերի. ինչպես նաև՝ նախորդ տարիների աշխատավարձերի պարտքերի մարման վերաբերյալ ամենամսյա հաշվետվություններ:

Լոռու մարզի համայնքների բյուջետային հիմնարկներից ստացվել և ամփոփվել է ամսեկան տեղեկատվություններ, ներկայացվել Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Բաժնի աշխատակիցների կողմից ապահովվել է մարզպետարանի գնումների գործընթացի կազմակերպումն ու ապահովումը: Գնումների համակարգողի կողմից մարզային ենթակայության կազմակերպությունների գնումների վերաբերյալ հայտարարություններն ու գնման պայմանագրերը օրենքով սահմանված կարգով տեղադրվել է կայքում և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գնումներն իրականացվել են տարբեր ընթացակարգերով, որից՝

- բանակցային ընթացակարգ առանց հայտարարության /մեկ անձ/ - **34** ընթացակարգ
- շրջանակային համաձայնագրեր – 6 ընթացակարգ
- պարզեցված ընթացակարգ – 2 ընթացակարգ
- բաց ընթացակարգ – 4 ընթացակարգ

Իրականացվել է համայնքների ղեկավարների կողմից ներկայացվող գույքային հարկերի անդորրագրերի և ծանուցագրերի վերաբերյալ հաշվետվությունների և հայտ-պահանջագրերի ընդունում: Ստացվել է 85000 հատ գույքային հարկերի անդորրագրեր և 20000 հատ հողի հարկի ծանուցագրեր, 4000 հատ գույքահարկի ծանուցագրեր, որը համայնքներին բաշխվել է ըստ համապատասխան հայտերի:

Ընդունվել են համայնքների կողմից ներկայացվող 2017թ. սուբվենցիաների հայտերը (ծրագրերը) ստուգվել, ամփոփվել և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն: Ընդհանուր առմամբ հայտ է ներկայացրել 4 քաղաքային համայնք, ընդամենը 14 ծրագիր 1մլրդ. 729 մլն 174 հազ 600 դրամ գումարով:

Բաժնի աշխատակիցները մասնակցել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին:

Կազմակերպվել իրականացվել է մարզպետարանի հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի վարումը, տեղեկատվության մշակումը և համակարգված տեղեկությունները տրամադրումը ՀՀ ՏԿՀՆ: Ընդունվել է պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով ՏԻՄ-երին տրամադրվող դոտացիաների ելակետային տվյալները, ամփոփվել ներկայացվել ՀՀ ՏԿՀՆ, ինչպես նաև համայնքներին է տրամադրվել դոտացիաների նախնական տվյալները բյուջեների նախագծերում նախատեսելու նպատակով:

Կազմակերպվել և իրականացվել է մարզի համայնքների բյուջեների եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման համար պահանջվող տեղեկատվության հավաքագրումը, ստուգումը և ամփոփումը ըստ համայնքների, ներկայացվել է ՀՀ ՏԿՀՆ:

Լոռի-Արցախ նախաձեռնության շրջանակներում կոորդինացվել են ապրիլյան պատերազմի ժամանակ Լոռու մարզի բնակչության, մարզային և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից իրականացված դրամահավաքի աշխատանքները: Լոռու մարզպետարանի ֆինանսական և սուցիալ-տնտեսական զարգացման վարչությունում նվիրատվություն կատարել են 253 կազմակերպություններ և անհատներ, ընդհանուր առմամբ 20.774.300 դրամ: Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու դահլիճում նվիրատվություն կատարել են 13 կազմակերպություններ և անհատներ, ընդհանուր առմամբ 173.000 դրամ:

Նվիրաբերված ընդամենը 20.947.300 դրամ գումարները ֆինանսական ենթահախմբի կողմից ուղղվել են հետևյալ ուղղություններով՝ բանկային փոխանցումներ ԼՂՀ ֆինանսների նախարարություն 16.000.000 դրամ, կանխիկ վճարումներ 4947.300 դրամ:

Կազմակերպվել և անցկացվել է տարբեր ԲՈՒՀ-երի շուրջ 35 ուսանողների ուսումնական պրակտիկան:

Պարբերաբար ըստ տարածաշրջանների քննարկումներ են կազմակերպվել համայնքների եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու նպատակով: Քննարկումները անց են կացրել մարզպետը և փոխմարզպետները:

2016թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Մարզի համայնքների բյուջեներով 2016թ կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 97.4%-ով կամ նախատեսված 7153.9 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 6971.0 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 6236.6 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 1667.8 մլն. դրամ:

(հազար դրամ)

h/h	Եկամուտների անվանումը	2015թ. Բյուջե			2016թ. Բյուջե			2016թ-ի աճը 2015թ-ի նկատ. (%)	2016թ-ի փաստ. նկատ. (%)
		ալյան	փաստ.	կատ %	ալյան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	362828.6	335963.3	92.6	354326.1	295319.0	83.3	-40644.3	87.9
2	Գույքահարկ	629179.4	664149.6	105.6	653600.7	701677.6	107.4	37527.9	105.7
3	Պետական տուրք	46770.0	42522.9	90.9	45950.0	41553.7	90.4	-969.2	97.7
4	Տեղական տուրք	105166.3	108460.0	103.1	107918.9	107263.2	99.4	-1196.8	98.9
5	Գույքի վարձ. վճար	222044.6	229694.5	103.4	232033.4	213498.5	92.0	-16196.0	92.9
6	Այլ հարկային եկամուտներ								
7	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	8278.8	5596.8	67.6	7075.0	4502.5	63.6	-1094.3	80.4
8	Տեղական վճարներ	243460.1	220279.6	90.5	296226.0	254172.0	85.8	33892.3	115.4
9	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	2586.0	2966.1	114.7	3504.5	2918.9	83.3	-47.1	98.4
10	Մուտքեր տույժերից, տուգանքներից	4800.0	4187.8	87.2	3960.0	2347.4	59.3	-1840.4	56.1
11	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ		1500.0		1500.0	300.0	20.0	-1200.0	20.0
12	Այլ եկամուտներ	40417.4	47769.4	118.2	41101.0	44500.9	108.3	-3268.5	93.2

13	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	4293507.1	4286398.6	99.8	4537482.6	4441760.1	97.9	155361.5	103.6
14	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	80606.0	80586.5	100.0	80969.5	80864.7	99.9	278.2	100.3
15	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	137853.9	136220.3	98.8	52555.2	54055.6	102.9	-82164.7	39.7
ԴԱՀ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից			-1609.0			-8171.3		-6562.3	507.9
Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ		6177498.2	6164686.4	99.8	6418202.9	6236562.7	97.2	71876.4	101.2
16	Տարեսկզբի ազատ մնացորդ	28308.9	28308.9	100.0	26050.4	26050.4	100.0	-2258.5	92.0
Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր		6205807.1	6192995.3	99.8	6444253.3	6262613.1	97.2	69617.9	101.1
1	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից				7051.6	7051.6	100.0	7051.6	#DIV/0!
2	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	222867.5	233231.6	104.7	59212.0	57966.9	97.9	-175264.7	24.9
3	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	119288.0	83241.4	69.8	77503.9	43050.5	55.5	-40191.0	51.7
4	Այլ մուտքեր	18131.0	17600.7	97.1	70.0	70.0	100.0	-17530.7	0.4
ԴԱՀ-ով տարված գումարներ բյուջեի ֆոնդային մասից									
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	360286.5	334073.7	92.7	143837.5	108138.9	75.2	225934.8	32.4
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	550468.1	550468.1	100.0	643268.9	643268.9	100.0	92800.8	116.9
Ֆոնդային բյուջեի մուտքեր		910754.6	884541.8	97.1	787106.4	751407.8	95.5	-133134.0	84.9
Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ		1665531.2	1661590.0	99.8	1745695.6	1667753.6	95.5	6163.6	100.4
Ընդամենը բյուջեի եկամուտներ		6418496.7	6415518.7	100.0	6484536.5	6301651.2	97.2	-113867.5	98.2
Ընդամենը բյուջեի մուտքեր		6997273.7	6994295.7	100.0	7153855.8	6970970.5	97.4	-23325.2	99.7


Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 97.2%-ով՝ նախորդ տարվա 99.8%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 75.2%-ով՝ նախորդ տարվա 92.7%-ի դիմաց:

Համայնքների սեփական եկամուտները 2016թ. կտրվածքով կազմել է 1667.8 մլն դրամ, 2015թ. կտրվածքով կազմել է 1661.6 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2015թ-ի նկատմամբ կազմել է 100.4%, բացարձակ աճը 2015-ի նկատմամբ՝ 6.2 մլն. դրամ:

Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 103.4%, Գուգարքի տարածաշրջանի համայնքներում՝ 101.9%, իսկ նվազում՝ Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 96.7%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 97.7%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 98.8:

Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը 46.5%, ապա Թումանյանի տարածաշրջանը 19.2%, Սպիտակի տարածաշրջանը՝ 12.9%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 11.7%, Տաշիրի տարածաշրջանը՝ 9.7%:

2016թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ տարածաշրջանների




2016թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 57 համայնքներում (համայնքների 53.5%-ը, այդ թվում՝ Թումանյանում և Տաշիրում՝ 13-ական համայնք, Սալիտակում՝ 12 համայնք, Ստեփանավանում՝ 11 համայնք, Գուգարքում՝ 8 համայնք:


Սեփական եկամուտների գծով 2016թ. համար նախատեսվել են 1745.6 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 1667.8 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 95.5%, 2017թ. համար նախատեսվել է 1843.2 մլն. դրամ, կամ աճը 2016թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 105.6%, փաստացիի նկատմամբ 110.5%: Մարզի 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների գծով ցուցանիշը 2016թ. համար կազմում է 5720 դրամ, Վանաձորում այն 5566 դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ (մինչև 300 բնակիչ ունեցող) Մեղվահովիտ համայնքում է 2016թ. 31590 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Աքորի համայնքում է 2016թ. 1986 դրամ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016 թ-ին սեփական եկամուտները մինչև 60% կատարել էին 3 համայնքներ, 2015 թ-ին 1 համայնք, նույն ժամանակաշրջանում 60-80% կատարում են ապահովել համապատասխանաբար 25 և 7 համայնքներ, 80-100% համապատասխանաբար 43 և 55 համայնքներ, 100%-ից ավել՝ 36 և 50 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը աճել է 18-ով, իսկ 80-100%-ից ավել նվազել՝ 12-ով, 100%-ից ավել նվազել՝ 14-ով: Առանձնապես մտահոգիչ է այն փաստը, որ ըստ վերջին տարիների վերլուծությունների, ցածր կատարողական ապահովող համայնքները հիմնականում անփոփոխ են մնում: Ցածր հավաքագրման պատճառաբանություններում կան բազմաթիվ սյուբեկտիվ գործոններ, որոնցից որպես հիմնականը կարելի է համարել համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու շատ պասիվ և անհետևողական աշխատանքը սեփական եկամուտների հավաքագրման գործում:

2016թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը



2015թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ եկամտատեսակների



2016 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 17.7%, գույքահարկինը՝ 42.1%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 12.8%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 20.2%, 40.0% և 13.8%-ի դիմաց:

2016թ. հողի հարկի 354.3 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 295.3 մլն դրամ, կամ 83.3%, (2015թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 87.9%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից պակաս է 40.6 մլն. դրամով:


Մարզի 1 բնակչի հաշվով հողի հարկի հավաքագրման ցուցանիշը 2016թ. համար կազմում է 1161 դրամ, Վանաձորում այն 310 դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ (մինչև 300 բնակիչ ունեցող) Մեղվահովիտ համայնքում է 13368 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Քարկոտի համայնքում է 9 դրամ:

Հողի հարկի հավաքագրումը հատկապես վատ է Տաշիրի տարածաշրջանում՝ 77.8% , 70%-ից ցածր մուտքագրում ունեն Թումանյանի տարածաշրջանում 7 համայնք, Տաշիրի տարածաշրջանում 6 համայնք, Ստեփանավանի տարածաշրջաններում 5 համայնք, Գուգարքի տարածաշրջանում 3 համայնք և Սպիտակի տարածաշրջանում 2 համայնք:

Նույն ժամանակահատվածում հողի հարկի հավաքագրումը նախատեսվածի 80%-ը գերազանցում է 70 համայնքներում, որից 100%-ը 39 համայնքներում:

Հողի հարկի հավաքագրումը 2015թ. համեմատությամբ նվազել է 76 համայնքներում, կամ համայնքների 71.0%, այդ թվում՝ Թումանյանի տարածաշրջանում՝ 19, Գուգարքի և Տաշիրի տարածաշրջաններում՝ 15-ական, Սպիտակի տարածաշրջանում՝ 16, Ստեփանավանի տարածաշրջանում՝ 11 համայնքներ:

Վերջին 5 տարիների ընթացքում հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի հարկի հավաքագրումը 2012-2016թթ. (մլն. դրամ)

Գույքահարկի գծով 2016թ. համար նախատեսվել է 653.6 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 701.7 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 107.4%, (2015թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 105.7%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 37.5 մլն. դրամ:


Մարզի 1 բնակչի հաշվով գույքահարկի հավաքագրման ցուցանիշը 2016թ. համար կազմում է 2142 դրամ, Վանաձորում այն 2475 դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ Թեղուտ համայնքում է 7401 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Յաղդան համայնքում է 219 դրամ, պետք է նշել, որ քաղաքային համայնքներում ցուցանիշը հիմնականում մոտ է միջին մարզային ցուցանիշին, իսկ Թեղուտ համայնքում բարձր ցուցանիշը պայմանավորված է Թեղուտ ՓԲԸ-ին պատկանող գույքի արժեքով:

Գույքահարկի հավաքագման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 107.4%, Գուգարքի տարածաշրջանում՝ 110.1%, Սպիտակի տարածաշրջանում՝ 109.2%, Թումանյանի տարածաշրջանում՝ 106.0% , Տաշիրի տարածաշրջանում՝ 105.4% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 94.3%:

Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 87 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 49 համայնքներ:

Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները ըստ տարածաշրջանների աճել են Թումանյանում՝ 120.9%, Տաշիրում՝ 108.7%, Սպիտակում՝ 106.1%, Ստեփանավանում՝ 105.6%, Գուգարքում՝ 101.5%:

Վերջին 5 տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



ՀՀ Լոռու մարզի համայնքների գույքահարկի հավաքագրումը 2012-16թթ. (մլն. դրամ)

2016թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 232.0 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել 213.5 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 92.0%, (2015թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 92.9%, որը նախորդ տարվանից պակաս է հավաքագրված 16.2 մլն. դրամ:

Մարզի 1 բնակչի հաշվով այս ցուցանիշը 2016թ. համար կազմում է 760 դրամ, Վանաձորում այն 335 դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ Թեղուտ համայնքում 17086 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Զրաշեն համայնքում է 56 դրամ:

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 99.4%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 103.1%-ի դիմաց, փաստացի հավաքագրումը նվազել է 1.2 մլն. դրամով: 2016թ. ընթացքում տեղական տուրքերի գծով մուտք չեն ունեցել 14 համայնք:

Պետական տուրքի գանձումը կազմել է 90.4%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 969.2 հազ. դրամով:

2016թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 4119702.2 հազ.դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով: 2016թ. ընթացքում պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացվել է այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին 322057.9 հազար դրամ:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2016թ-ի համար նախատեսվել են 6444.3. մլն. դրամ, 01.01.2017թ. դրությամբ փաստացի վճարվել է 2299.9 մլն. դրամ, կամ 94.0 %, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել 787.1 մլն. դրամ, որից վճարվել է 417.9 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 53.1%-ով:

հազար դրամ					
Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2446714.7	2299881.9	94.0	38.3
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2195.0	1580.4	72.0	0.0
3	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ,ԱՆՎՏԱՆԳ. ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	211699.3	198261.4	93.7	3.3
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	588953.4	574859.8	97.6	9.6
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	294466.3	261599.2	88.8	4.4
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	3356.0	2956.0	88.1	0.0
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	580777.4	563529.4	97.0	9.4
9	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1867223.8	1827256.0	97.9	30.4
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	251351.3	238213.5	94.8	4.0
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	197516.3	44372.4	22.5	0.7
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	77503.9	43050.5	55.5	0.7
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		6444253.5	6012509.9	93.3	94.1
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	217403.2	109343.7	50.3	26.2
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	93800.4	-27348.1	-29.2	-6.5
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	111982.0	104852.1	93.6	25.1
4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	219001.7	148319.4	67.7	35.5
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ			#DIV/0!	0.0
6	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	56664.8	35707.8	63.0	8.5
7	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	88229.2	46998.7	53.3	11.2
8	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	25.0	0.0	0.0	0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		787106.4	417873.6	53.1	6.5
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		7153855.9	6387333.1	89.3	

ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերը 2016թ. համար նախատեսվել են 7153.9 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 6387.3 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 89.3%: 2016թ. համար 1 բնակչի հաշվով ծախսերի միջին մարզային ցուցանիշը կազմում է 21737 դրամ, ամենամեծ ցուցանիշը՝ (մինչև 300 բնակիչ ունեցող) Հովնանաձոր համայնքում է 87833 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Լեռնահովիտ 10270 դրամ: Քաղաքային համայնքներում այս ցուցանիշը տատանվում է 19244 -26021 դրամի շրջանակներում:

Համայնքների բյուջեների վարչական մասի կատարված փաստացի 6012.5 մլն. դրամ ծախսի մեջ համայնքապետարանների պահպանման ծախսերը կազմում են 2078.2 մլն. դրամ կամ 34.6%, 1 շնչին ընկնող ապարատի պահպանման ծախսի միջին մարզային ցուցանիշը կազմում է 6810 դրամ, ամենաբարձր ցուցանիշը Հովնանաձոր համայնքում է 83127 դրամ (մինչև 300 բնակիչ), իսկ ամենացածր ցուցանիշը՝ Վանաձորում՝ 2355 դրամ, ընդ որում հիմնականում այս ցուցանիշը ցածր է խոշոր քաղաքային համայնքներում՝ Ալավերդի 4157 դրամ, Տաշիր 4186 դրամ, Ստեփանավան 4983 դրամ, Սպիտակ 5676 դրամ:

Մարզի 107 համայնքների 2016թ.բյուջեների վարչական ծախսերի մեջ աշխատավարձերի գծով ծախսերը կազմել է 1,932,5 մլն դրամ, որը կազմում է ծախսերի մոտ 32.1%-ը, կամ ապարատի պահպանման ծախսերի 93.0%-ը:

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10,070.8 հազար դրամ, որը ամբողջությամբ Վանաձոր համայնքի պարտքն է:

Ըստ ոլորտների ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության բնագավառին ուղղված ծախսերը՝ 30.4%, այդ թվում նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերը՝ 50.1%, կամ բյուջեների վարչական մասի 15.2%-ը: Ընդ որում 2016թ. մարզում համայնքային բյուջեներից ֆինանսավորվող նախադպրոցական կրթության հիմնարկների թիվը 68 է, որոնք սպասարկում են 35 համայնքների, այս համայնքներում 1 երեխայի կտրվածքով տարեկան ծախսերը տատանվում են 137.7 հազ. դրամից մինչև 417.9 հազ. դրամ:

Աղբահանության գծով մարզում ծախսեր իրականացնում են 41 համայնքներում, որի համար 2016թ. ծախսվել է 495.4 մլն դրամ և վարչական ծախսերի ընդհանուր գումարի 8.2%, կամ այս համայնքներում 1 բնակչի հաշվով ծախսվող միջին գումարը կազմում է 2206 դրամ, իսկ ընդհանուր մարզի կտրվածքով՝ 1624 դրամ:

Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի համայնքներում ծախսը 2016թ. կազմել է 238.2 մլն. դրամ կամ վարչական ծախսերի 4.0%-ը: Մարզի 107 համայնքներից սոցիալական ծրագրեր (հիմնականում սոց. օգնությունների տեսքով) իրականացվել են 100 համայնքներում, բացառություն են կազմել Հովնանաձոր, Ապավեն, Մեղովկա, Նովոսելցովո, Շամլուղ, Զիլիզա, Անտառաշեն համայնքները, վերջին երկու համայնքներում գումարների սղության պատճառով բյուջեով նախատեսվել է միայն ապարատի պահպանման ծախսեր:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ

Մարզպետարանի ապարատի պահպանության հետ կապված աշխատանքներ

Մարզպետարանի պահպանման և մարզպետարանի միջոցով իրականացվող տարբեր ծրագրերի ֆինանսավորման համար 2015թվականի 9.231.130,9 հազ. դրամի դիմաց 2016թվականին ֆինանսավորումը կազմել է 8.490.085,5 հազ. դրամ, կամ նվազել է 741.045,4 հազ. դրամով(8.2 տոկոսով):

Ստորև ներկայացվում է 2014-2015թթ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորված, 2016թ.-ին նախատեսված և ֆինանսավորված գումարները.

(հազ. դրամ)

	2014թ	2015թ	2016թ նախատեսվ	2016թ փաստացի

			ած	
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	454063.7	571620.4	572734.6	568168.9
Հանրակրթական ուսուցում	5881762.6	6235951.4	6353292.6	6353292.6
Ներառական կրթություն	166395.8	281184.0	356994.5	356994.5
Հատուկ կրթություն	109017.7	115149.8	108566.8	108566.8
Նախադպրոցական (կրթություն)	32930.7	41128.6	43051.3	43051.3
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	7947.1	8311.8	162.1	162.1
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	28357.8	38943.5	38943.5	38943.5
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	278.1	278.1	504.8	504.8
Կրթական հիմնարկների եւ օբյեկտների շինարարություն	213903.8	144290.3	18353.9	18353.9
Թանգարանային ծառայություններ	13195.1	16157.6	16263.0	16263.0
Մշակութային միջոցառումների իրականացում	3542.3	3542.3	3542.3	3542.3
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	114664.0	848128.5	204420.0	194687.9
Մարզային նշանակության ա/ճ-ների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում	69043.7	71400.0	75000.0	74864.7
Պետական նշանակության ա/ճ-ների և) հիմնանորոգում	435892.5	270262.6	0	0
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	520434.2	291616.3	304344.0	295941.6
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում	0	3600.0	3870.0	3870.0
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	396181.2	283102.1	162057.9	162057.9
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	0	0	12390.4	12388.0
Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանով ապահովում*	0	0	225000.0	225000.0
Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժներին հավելավճարի տրամադրում	3155.7	6463.6	13800.0	13431.7
Ընդամենը	8450766.0	9231130.9	8513291.7	8490085.5

Նախորդ տարվա համեմատ առավել նվազել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված գումարները՝ 2015թվականի 848128.5 հազ. դրամի փոխարեն 2016թվականին հատկացվել է 194687.9 հազ. դրամ, կամ նվազել է 653437.6 հազ. դրամով:

Աճել է «Մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում», «Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում» ծրագրերով ֆինանսավորման ծավալները: Մի շարք ծրագրերով ֆինանսավորման ծավալը մնացել են անփոփոխ:

2015թվականի նկատմամբ 2016թվականին մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը նվազել են շուրջ 3.5մլն դրամով, կամ նվազել են 0.6 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է մի շարք հոդվածներով առկա տնտեսումներով: 2016թ. նախատեսված 572734.6 հազ. դրամի փոխարեն փաստացի ծախսը կազմել է 568168.9 հազ. դրամ, կամ տնտեսումը կազմել է 4565.7 հազ. դրամ: Հիմնականում տնտեսումներն առաջացել են «Էներգետիկ ծառայություններ»՝ 1894.2 հազ. դրամ, «Կապի ծառայություններ»՝ 867.6 հազ. դրամ և «Տրանսպորտային նյութեր»՝ 1367.1 հազ. դրամ հոդվածներով:

Աշխատավարձի բնականոն աճի հետևանքով ավելացել է աշխատողների միջին աշխատավարձը մոտ 2 տոկոսով՝ 2015թվականի 252.0 հազ. դրամի դիմաց 2016 թվականին կազմել է 257.0 հազ. դրամ: 2016թվականին նախորդ տարվա նկատմամբ 13.4%-ով ավելացել է նաև պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը:

Կրթության ոլորտ

2016թվականին 2015թվականի նկատմամբ աճել է մարզպետարանի ենթակայության կրթական հաստատությունների հանրակրթական, ներառական, հատուկ և նախադպրոցական ուսուցում ծրագրերով ֆինանսավորման ընդհանուր ծավալները շուրջ 2.8 տոկոսով՝ 2015թվականի 6673413.8 հազ. դրամի փոխարեն 2016թվականին կազմել է 6861905.2 հազ. դրամ, ինչը պայմանավորված է աշակերտների միջին թվի և 100 աշակերտից ավել դպրոցների պահպանման ծախսերի ավելացմամբ: Աշակերտների միջին թիվը 2015թվականի 25019 աշակերտի փոխարեն 2016թվականին կազմել է 25600, կամ ավելացել է 581-ով: 100 աշակերտից ավել դպրոցի պահպանման ծախսը 2015թվականի 3481.5 հազ. դրամի փոխարեն 2016թվականին նախատեսված է 3727.5 հազ. դրամ, կամ ավելացել է 246.0 հազ. դրամով:

Կրթական հաստատություններում միջին աշխատավարձերի էական փոփոխություններ չեն կատարվել, ուսուցիչների միջին դրույքաչափը կազմում է 116.0 հազ. դրամ, տնօրեններինը՝ 206.0 հազ. դրամ, ուսումնաօժանդակ աշխատողներինը՝ 80.0 հազ. դրամ:

2016թվականին 2015թվականի նկատմամբ աճել են նաև «Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում», «Թանգարանային ծառայություններ», «Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժներին հավելավճարի տրամադրում» ծրագրերով ֆինանսավորումները: 2015թվականի նկատմամբ 2016թվականին ավելի քան 2.2 անգամ ավելացել է ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժների թվաքանակը, ինչի հետևանքով 2016թվականին ֆինանսավորումը կազմել է 13431.7 հազ. դրամ, նախորդ տարվա 6463.6 հազ. դրամի դիմաց:

Առողջապահության ոլորտ

2016թվականին 2015թվականի համեմատ ոլորտի ընկերություններում ավելացել է պետական պատվերի գումարները՝ 1.5 տոկոսով, վճարովի ծառայություններից ստացվող մուտքերը՝ 0.3 տոկոսով, նվազել է պետական բյուջե վճարվող շահաբաժինների ծավալը՝ 31.2 տոկոսով:

	2014թ.	2015թ.	2016թ.
Պետական պատվեր	3577565.0	3717816.2	3774220.1
Վճարովի ծառայություններ	502899.0	570895.3	572801.5
Վճարված շահաբաժին	13231.1	17008.2	11693.3

Առողջապահական կազմակերպությունների աշխատակիցների թիվը կազմում է 2093, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 36-ով: Մեկ հիվանդի բուժման մեկ օրվա արժեքը 2015թ.-ի 18675.3 հազ. դրամի փոխարեն 2016թվականին կազմում է 19166.5 հազ. դրամ, կամ ավելացել է 491.5 հազ. դրամով: Միջին աշխատավարձը ավելացել է 2%-ով, 2015թ. 128.3 հազ. դրամի դիմաց 2016թ. կազմել է 130.9 հազ. դրամ:

Պետական աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի իրականացում

Սոցիալական փաթեթի ֆինանսավորման գումարները 2015թվականի նկատմամբ 2016թվականին աճել են շուրջ 1.5 տոկոսով (291616.3 հազ. դրամի փոխարեն կազմելով 295941.6 հազ. դրամ), որը պայմանավորված է շահառուների թվի ավելացմամբ:

/հազ. դրամ/

	2015թ.	2016թ.	2016թ.-ը 2015թ.-ի նկատմամբ
Պետական բյուջեից հատկացված գումարներ	291616.3	295941.6	101.5
Շահառուների թիվ	4680	4716	100.8

Համայնքներում իրականացվող վարչական հսկողություն

2016թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված էր իրականացնել վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի 33 համայնքներում, որը իրականացվել է ամբողջությամբ:

Հսկողության արդյունքում կազմվել են համապատասխան արձանագրություններ: Արձանագրվել են մի շարք խախտումներ, այդ թվում.

Համայնքի բյուջեի կատարման եռամսյակային հաղորդումները որոշ դեպքերում ներկայացվել են ավագանուն ուշացումներով, կամ թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի 1-ին կետի, հոդված 69-ի առաջին մասի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 35-ի կետ 1-ի պահանջները:

Հանրային բաց լսումներ և քննարկումներ չեն իրականացվել, կամ չի պահպանվել «ՏԻՄ» օրենքի հոդված 54.1-ի պահանջը:

Գործուղումների տրամադրման, հաշվարկման և վճարման ժամանակ չի պահպանվել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները:

Չի պահպանվել «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 21-րդ կետի պահանջը, ըստ որի մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը պատվիրատուի/համայնքի/ ղեկավարը հաստատում է գնումների պլանը և յոթ

աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում

Որոշ դեպքերում չի պահպանվել ՀՀ կառավարության 2003թ. թիվ 750-Ն որոշման 10-րդ կետի պահանջը, ըստ որի գյուղական համայնքներում գանձված հարկի գումարները կախված հեռավորությունից պետք է մուծվեր բանկ 2-5 օրվա ընթացքում:

Անաշխատունակության նպաստը հաշվարկելու ժամանակ չի պահպանվել «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի կետ 2-ի պահանջը:

Որոշ համայնքներում աշխատողների մի մասին յուրաքանչյուր տարի չի տրամադրվել հերթական ամենամյա արձակուրդներ, կամ չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի կետ 1-ի պահանջը:

Արձակուրդային վճարների և աշխատանքային պայմանագիրը լուծելիս չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցման գումարների հաշվարկման ժամանակ որոշ դեպքերում միջին աշխատավարձի հաշվարկման ժամանակ չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի կետ 2-ի պահանջը:

Չի պահպանվել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի գ/ ենթակետի պահանջը, ըստ որի «համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում»:

Արձանագրությունները քննարկվել են մարզպետարանում և արձանագրված խախտումների և թերությունների վերացման վարաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ: